Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 03

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստի

ք. Երևան 27 նոյեմբերի 2025թ.

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ կետը՝ սույն թվականի նոյեմբերի 27-ին հրավիրվել է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստ:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Համբարձում Մաթևոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Տարոն Հակոբյան	վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Բարդուխ Գաբրիելյան	Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ձկնաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Շահեն Խաչատրյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Բացակայում է՝	
Դավիթ Խուդաթյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Տաթևիկ Սարգսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Տիգրան Դադունց	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Յուրիկ Հակոբյան	Հայաստանի երկրաբանների միություն ՀԿ
Սուրեն Մելիքյան	Մանթաշյանց գործարարների միություն

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2026 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը հաստատելու մասին:

4. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման 2025 թվականի 1-ին,2-րդ և 3-րդ եռամսյակների կատարողականների գնահատումները հաստատելու մասին:

5. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման 2024 թվականի 3-րդ և 4-րդ, 2025 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվություններին հավանություն տալու մասին:

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Կառավարման խորհրդի անդամներ Դավիթ Խուդաթյանը և Յուրիկ Հակոբյանը չեն մասնակցում նիստին Հայաստանի Հանրապետությունից բացակայելու, իսկ Տիգրան Դադունցը, Արման Պողոսյանը և Տաթևիկ Սարգսյանը այլ նիստերի մասնակցելու հիմքով:

Հաշվի առնելով վերոգրյալը Կառավարման խորհրդի նիստն իրավազոր չէ, քանզի նիստին չի մասնակցում խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Կառավարման խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց առաջարկություն նիստն անցկացնել հեռակա քվեարկության միջոցով և քվեարկության ժամկետ սահմանել սույն թվականի նոյեմբերի 28-ը, ժամը՝ 18:00-ն:

Տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը Կառավարման խորհրդի նախագահին և ներկա անդամներին ներկայացրեց 2026 թվականի գործունեության ծրագիրը, անցկացվող միջոցառումները և ստուգումների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը:

Տեսչական մարմնի ղեկավարը հայտնեց, որ Որակի ապահովման վարչության կողմից ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ Տեսչական մարմինը եռամսյա ժամկետում Կառավարման խորհրդին կներկայացնի համապատասխան պարզաբանումները, որը առաջարկվեց քննարկել հաջորդ հերթական նիստի ընթացքում:

Տեսչական մարմնի ղեկավարի կողմից Կառավարման խորհրդին առաջարկվեց նաև քվեարկության օրակարգում ավելացնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2026 թվականի բյուջետային հայտին հավանություն տալու վերաբերյալ հարցը:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____Հ. Մաթևոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ
(խորհրդի քարտուղար) _____Վ. Բարսեղյան